# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի |
|---|---|
| | տեխնիկական բնութագիրը |
| 12 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Սվիտեր (ձմեռային)՝ ուսադիրներով (Ձև 14): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի բրդյա (50% բուրդ, 50% ակրիլ, թույլատրելի շեղում՝ +, - 2%, 700-800 գ/մ2 քաշով) գործվածքից, ուսերը և թևքերի արմունկի մասում պատված են մուգ կապույտ կտորով: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան՝ 14,5 X 12 սմ չափսերով: Ունի ուսադիրների համար նախատեսված լեզվակ, իսկ ուսադիրները կտորից են՝ հանովի, մեկ կոճակով կոճկվող: Գրպանի և ուսադիրների լեզվակի կոճակները մետաղական են՝ մուգ կապույտ գույնի: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Ուսադիրների հիմքի գույնը պետք է համապատասխանի սվիտերի գույնին: Սվիտերները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը։ Նախքան սվիտերների պատրաստումը սվիտերների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Սվիտերների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև սվիտերների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված |

| | |
|---|---|
| | լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 12 | |